Մրցույթի հայտարարություն

«Երևանի Արգիշտի Առաջին արքայի անվան հ. 61 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

Տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի համաձայն՝ «Երևանի Արգիշտի Առաջին արքայի անվան հ. 61 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.
2) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Երևանի Արգիշտի Առաջին արքայի անվան հ. 61 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ 2021 թվականի դեկտեմբերի 7–ից մինչև 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 16:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունվարի 12-ին՝ ժամը 14:00-ին, Երևանի Արգիշտի Առաջին արքայի անվան հ. 61 հիմնական դպրոցում, հասցե՝ Գ. Հովսեփյան 91, հեռախոս՝ (010) 653 621, էլ. փոստի հասցե՝ school61@schools.am:

Տեղեկությունների համար դիմել՝

Մարինե Սարիբեկյան (093) 036 965, david.grigoryan.81@mail.ru

Մարիամ Արևյան (041) 513 015, mariamarevian@mail.ru: